ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Ռ Ե Կ Տ Ո Ր

// 12 // Մայիսի // 2023թ.
№ 11/252

ԵՊՀ իրավաբանական գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի գիտքարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ տիկին Ժ. Ստեփանյանին

Հարգելի՛ տիկին Ստեփանյան

Ի պատասխան Ձեր 26.04.2023թ. № Ի-019 գրության Ձեզ ենք ուղարկում Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Արթուր Սեյրանի Նահապետյանի՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ՀՀ ՊԿԱ Իրավագիտության ամբիոնի 2023թ. մայիսի 12-ի նիստի որոշման քաղվածքը, ներառյալ կարծիքը՝ որպես առաջատար կազմակերպության կարծիք:

Հարգանքով՝ **Խ. Ղազեյան**

ք. Երևան – 0028, Կիևյան 8 - 8 Kievian, Yerevan – 0028 - Ереван – 0028, Киевян 8
Հեռ./tel./тел. (+374 10) 26 92 59

Հաստատում եմ՝
ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ռեկտոր Խ.Ղազեյան
«12» 05 2023թ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի 2023թ. մայիսի 12-ին կայացած նիստի № 3 արձանագրությունից

Մասնակիցներ

Ա. Եզեկյան	-	իրավագիտության ամբիոնի վարիչ
Վ. Ստեփանյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գ. Դանիելյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ. Հակոբյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լ. Հակոբյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Մկրտչյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու
Ա. Ասատրյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու
Գ. Նավասարդյան	-	իրավագիտության ամբիոնի դասախոս
Խ. Բեզիրջյան	-	իրավագիտության ամբիոնի դասախոս

Լսեցին

ԺԲ 00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կարավարում) մասնագիտությամբ Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ Արթուր Սեյրանի Նահապետյանի՝ «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ որպես առաջատար կազմակերպություն կարծիք ներկայացնելու հարցի քննարկման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Ամբիոնի վարիչը նշեց, որ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Շաքարյանը ծանոթացել է ատենախոսությանը, կարծիք է տվել, համաձայն որի՝ քննարկվող ատենախո-

սությունը կատարված է որոշակի խորությամբ և ունի հիմնավորվածության որոշակի մակարդակ, ինչի հիման վրա ՀՀ պետական կառավարման ակադեմիան, որպես առաջատար կազմակերպություն, կարծիք է կազմել, որը ներկայացվում է ձեր քննարկմանը:

Ելույթ ունեցան՝

Ի.գ.դ.,պրոֆ. Գ.Դանիելյանը, ի.գ.թ., դոց. Ա.Եզեկյանը, ի.գ.դ.,պրոֆ. Վ.Ստեփանյանը, ի.գ.թ., դոց. Թ.Շաքարյանը և ի.գ.թ., դոց. Ա.Ասատրյանը: Նրանք կատարեցին առաջարկություններ և դիտողություններ:

Քննարկման արդյունքում հաստատվեց ատենախոսության վերաբերյալ հետևյալ կարծիքը.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Արթուր Սեյրանի Նահապետյանի՝ «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Արթուր Սեյրանի Նահապետյանի (այսուհետ՝ Հեղինակ) «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, իրացման երաշխիքներին, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին միջամտելու սահմադրութամբ արգելված դեպքերին:

Թեման արդիական է, մասնավորապես 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում, այն նվիրված է գիտագործնական հրատապություն ունեցող այնպիսի հարցադրումների համակողմանի

հետազոտությանը, ինչպիսիք են ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի, հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությանը, դրանց սահմանադրական բովանդակությանը և սահմանափակման հիմնախնդիրներին:

Թեմայի արդիականությունն առավել ընդգծվում է նաև այն իրողությամբ, որ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը՝ որպես սահմանադրական իրավունք, հայրենական իրավագիտությունում դեռևս համալիր կերպով հետազոտված չէ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են 9 պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից: Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտության հիմքը, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աշխատանքի առաջին գլխում Հեղինակը ներկայացրել է ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի, հոգեկան անձեռնմխելիության իրավունքի հասկացությունը, դրանց ներպետական սահմանադրական բովանդակությունը: Աշխատանքի այս հատվածում քննարկվող իրավունքը ներկայացվել է նաև արտասահմանյան երկրների սահմանադրական կարգավորումների և միջազգային փաստաթղթերի իրավակարգավորումների համատեքստում՝ հընթացս որոշակի եզրահանգումներ իրականացնելով:

Աշխատանքի երկրորդ գլխում Հեղինակը ներկայացրել է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքները, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքերը և սկզբունքները՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համատեքստում:

Աշխատանքի երրորդ գլխում Հեղինակը անդրադառնալով ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին միջամտելու՝ սահմանադրությամբ արգելված դեպքերին ներկայացրել է մասնավորապես բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը, մարդու վերարտադրողական կլոնավորման արգելքը, ինչպես նաև գիտական, բժշկական կամ այլ փորձերի թույլատրելիության սահմանները:

Աշխատանքի այս հատվածում Հեղինակը վերլուծել է նաև եվգենիկական փորձի հասկացությունը, դրա տեսակները, այդ թվում՝ միջազգային փաստաթղթերում ներկայացված իրավակարգավորումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի համատեքստում:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները՝ եզրահանգումների տեսքով:

Աշխատանքը, հիմնականում, շարադրված է գիտական պատշաճ պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, սակայն հիմնականում ռուսական իրավագետների, վերլուծել է թեմային առնչվող դատական ակտերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերն և արտասահմանյան երկրների փորձը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին: Ատենախոսությունում բավարար չափով ներկայացված է նաև միջազգային փորձի ուսումնասիրության շրջանակներում իրավահամեմատական վերլուծություններ ինչն առավելապես հարստացրել է կատարված հետազոտությունը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից հավուր պատշաճի օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ: Բացի այդ, ատենախոսությունում նկատվում է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների ու միջազգային փորձի վերաբերյալ:

Միաժամանակ, կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1.1. Ատենախոսության թեմայի արդիականությունը հնարավոր էր առավել հիմնավոր ներկայացնել, քանի որ **ներածությունում բացակայում է թեմայի արդիականությունը հիմնավորող բավարար փաստարկները**: Հեղինակը պետք է ներկայացներ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրության գիտագործնական անհրաժեշտությունը, դրան համապատասխան հիմնավորումներով, հընթացս առաջ քաշել անհրաժեշտ հարցադրումներ և ընդգծել դրանց առնչությամբ գիտական հետազոտական աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը: Մինչդեռ թեմայի արդիականությունը սահմանափակվել է միայն նշված իրավունքի վերաբերյալ սահմանադրական փոփոխություններով և ոլորտ կարգավորող օրենսդրության նորովի դիտարկելու անհրաժեշտությամբ, որը Հեղինակի կողմից չի բացահայտվել:

1.2. Ատենախոսության գիտական նորույթը գիտագործնական արժեք ներկայացնող հիմնախնդրի ներկայացումը և վերլուծումն է՝ ընդգծելով դրա ճանաչողական, գործնական և տեսական նշանակությունը, ինչպես նաև ամփոփելով այն կոնկրետ եզրահանգմամբ:

Ուստի նշվածի համատեքստում, թերևս, **հիմնավորված չէ Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ հետևյալը ներկայացնելը՝** «..**քննարկման առարկա են դարձել** ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման հարցում հանրային իշխանության պարտականությունները, նշված իրավունքի ապահովման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և

ընթացակարգեր ամրագրելու հիմնախնդիրները, ինչպես նաև այն դեպքերը, երբ արգելվում է միջամտել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին կամ թույլատրվում է միջամտությունը որոշակի երաշխիքների ապահովման պայմաններում»:

1.3. Հարկ է ընդգծել, որ ատենախոսության պաշտպանության ներկայացված դրույթները նույնությամբ կրկնվում են եզրակացության հատվածում՝ որպես առանձին եզրահանգումներ:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

2.1. Պաշտպանության դրույթների առնչությամբ հարկ է նշել, որ պաշտպանության որոշ դրույթներ լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն այն համատեքստում, որ պետք է բացահայտված լինեին դրանց գիտական արժեքը, որոշակի ընդհանրացումների արդյունքում միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը: Օրինակ՝ պաշտպանության 7-րդ դրույթի վերաբերյալ հարկ է նշել, որ այն կրում է զուտ ճանաչողական բնույթ՝ չունենալով որևէ գիտական արժեք:

Այսպես, պաշտպանության 3-րդ դրույթում ներկայացված եզրահանգումներից և որևէ մեկը գիտական նորույթ չէ, այն հիմնավորմամբ, որ նախ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը և դրա պաշտպանությունը, իսկ ներկայացված գործողություններից առնվազն ա) կետում, բ) կետում և ե) կետում ներկայացված հանրային իշխանության պարտականությունները դիտարկվում են որպես հանրային իշխանության պարտականություն ըստ սահմանադրության: Նույն դիտարկումը վերաբերում է նաև 5-րդ դրույթին, քանի որ եզրահանգումները կրկնվում են արդեն հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրականացման համատեքստում:

Պաշտպանության 2-րդ դրույթը լայն է ներկայացված այն համատեքստում, որ շեշտադրելով ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունները (ինչպես նշում է Հեղինակը, թերևս իրավազորություն տերմինը ամբողջ աշխատանքում սխալ է կիրառվել), այնուհետև նույն դրույթի շրջանակներում անցում է կատարում հոգեկան

անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բովանդակությունը, չնայած պաշտպանության 5-րդ դրույթը վերաբերում է հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակային ընկալման, իսկ պաշտպանության 1-ին դրույթը կրկին վերաբերում է ֆիզիկական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բովանդակային ընկալմանը: Արդյունքում, պարզ չէ Հեղինակը նշված իրավունքների հասկացությունը և բովանդակությունը առանձին է բացահայտում, թե միասին, թերևս հաշվի առնելով նշված դրույթներում արտացոլված կրկնությունները՝ հիմնավորված չէ դրանք որպես առանձին պաշտպանության դրույթներ ներկայացնելը:

2.2. Աշխատանքում առկա են նաև բազմաթիվ չհիմնավորված եզրահանգումներ, որոնց վերաբերյալ Հեղինակի կողմից ներկայացված չէ որևէ կոնկրետ բնույթի առաջարկություններ կամ դատողություններ: Այսպես, աշխատանքի 85-րդ էջում Հեղինակը նշում է, ինչը կրկնվում է նաև եզրակացության հատվածում, որ **«.....Օրենսդրական փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է ամրագրել ոչ թե անձնական անձեռնմխելիության իրավունք, այլ հոգեկան անձեռնմխելիության իրավունք, իսկ գործընթացներն այնպես կարգավորել, որ օրենքը բավարարի իրավունքի գերակայության սկզբունքի մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքին: ...ՀՀ գործող քրեական օրենսգրքում համապատասխան օրենսդրական լրացման միջոցով անհրաժեշտ է օրինադրույթ նախատեսել առ այն, որ ՀՀ քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն»:**

Նշված օրենսդրական փոփոխությունների եզրահանգման վերաբերյալ որևէ կոնկրետ առաջարկություն՝ ուղղված որևէ գիտագործնական արժեք ներակայացնող հիմնախնդրի լուծմանը վերը նշվածի համատեքստում, Հեղինակը չի ներկայացրել, ինչը թերևս հնարավորություն չի տալիս ընկալելու, թե Հեղինակը կոնկրետ ինչ է նկատի ունեցել:

Աշխատանքի 107-րդ էջում նշում է. «**ՀՀ գործող քրեական օրենսգրքում մի շարք օրենսդրական լրացումների միջոցով անհրաժեշտ է վերարտադրո-**

ղականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման և բիոէթիկայի ոլորտում այլ հանրորեն վտանգավոր արարքների կատարման համար նախատեսել քրեաիրավական պատասխանատվություն»: Տվյալ դեպքում նույնպես աշխատանքում բացահայտված չեն՝ կոնկրետ այլ հանրորեն վտանգավոր որ արարքների կատարման համար պետք է նախատեսել քրեական պատասխանատվություն և ինչ պատճառներից է բխում դրա անհրաժեշտությունը:

Նշված նկատառումները այն համատեքստում, որ Հեղինակը չի հիմնավորում իր ներկայացրած առաջարկությունները բավարարվելով «ճիշտ կլիներ», «նպատակահարմար կլիներ» եզրույթներով, վերաբերում են նաև այնպիսի առաջարկներին, ինչպիսիք են՝ **Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ ավելի ճիշտ կլինի մատնանշել ոչ թե «եվգենիկական փորձեր» եզրույթը, այլ՝ հենց «եվգենիկական գործունեություն» եզրույթը, Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեջ պետք է կատարվի համարժեք փոփոխություն և սահմանադրական արգելքը տարածվի բացառապես պոզիտիվ եվգենիկայի վրա, համարժեք օրենսդրական լրացում պետք է արվի նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում՝ հստակ բացառություն նախատեսելով նեգատիվ եվգենիկան և այլն:**

2.3. Կարծում ենք, աշխատանքը առավել կշահեր, եթե Հեղինակը ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի բովանդակության ներկայացման համատեքստում անդրադառնար մորֆոլոգիական ազատությանը կամ իրավունքին՝ այն իմաստով, որ արդյոք ներպետական օրենսդրությունը այդ իրավունքի կարգավորման համատեքստում չունի այն ամրագրելու և դրա իրացման երաշխիքները նախատեսելու անհարժեշտություն: Ինչպես նաև աշխատանքի 2-րդ գլխի 3-րդ պարագրաֆում Հեղինակի կողմից պետք է ուսումնասիրության նյութ դառնար նաև քննարկվող իրավունքի ժամանակավոր սահմանափակման վերաբերյալ դատողություններ, այսինքն՝ արտակարգ և ռազմական դրության ժամանակ, այն իմաստով, որ սահմանադրությամբ ամրագրված լինելով՝ որպես սահմանափակվող իրավունք, այնուհանդերձ, այն նշված իրավական ռեժիմների ժամանակ լրացուցիչ չի սահմանափակվում:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Արթուր Սեյրանի Նահապետյանի՝ «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ***ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»*** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Որոշեցին՝

Արթուր Սեյրանի Նահապետյանի՝ «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենա-խոսություններին ներկայացվող պահանջներին, աշխատանքում առկա թերությունները էական բնույթ չեն կրում և ատենախոս **Արթուր Նահապետյանն** արժանի է ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հաստատել առաջատար կազմակերպության կարծիքը:

Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ **Ա. Եգեկյան**